

**ИЗ ИСТОРИИ ЛИТЕРАТУРНОГО СОТРУДНИЧЕСТВА  
МАНУКА АБЕГЯНА И ОВАНЕСА ТУМАНЯНА**

**ԱՍՏՎԱԾԱՇՆՉԱՅԻՆ ԵՐԿՈՒ ԹԵՄԱԼԵՐԻ  
ՀԵՏԵՎՈՂՈՒԹՅԱՄԲ ԳՐՎԱԾ  
ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Встреча Манука Абегиана и Ованеса Туманяна состоялась ещё в 1890 г., когда Абегиан откликнулся на первый стихотворный сборник поэта своей известной рецензией. Их дружба стала ещё прочнее в годы деятельности Кавказского общества армянских писателей (1912-1921 гг.).

Поэт и его критик имели некоторые разногласия в вопросах искусства и литературы, однако это никогда не препятствовало их тёплым дружеским отношениям. Известный учёный-арменовед и Поэт всех армян на протяжении тридцати лет тесно сотрудничали, проявляя большое взаимное уважение.

Литературное сотрудничество Манука Абегиана и Ованеса Туманяна является образцом дружеских взаимоотношений между писателем и критиком, между двумя выдающимися деятелями армянской культуры.

**Summary**

**Susanna Hovhannisyan**

**FROM THE HISTORY OF LITERARY COLLABORATION  
OF MANUK ABEGHYAN AND HOVHANNES TUMANYAN**

Meeting of ManukAbeghyan and HovhannesTumanyan was held back in 1890, when Abeghyan responded to the first book of poems of the poet with his famous review. Their friendship became even stronger in the years of the activity of Caucasian Society of Armenian Writers (1912-1921).

The poet and critic had some disagreements in matters of art and literature, but it has never hindered their warm friendly relations. Famous scientist and the Poet of all Armenians for thirty years worked closely, showing great mutual respect.

Literary collaboration of ManukAbeghyan and HovhannesTumanyan is an example of friendly relations between the writer and critic, between two prominent figures of the Armenian culture.

Նոր շրջանի հայ դասական գրականությանը բնորոշ ձևով Իսահակյանը ևս դիմել է Աստվածաշնչային թեմաներին և տարբեր հատվածներին, որը, ինչպես Թումանյանի և մյուս հայ հեղինակների դեպքում, պայմանավորված էր երկու պատճառով: Առաջին՝ անձնական ապրումների ու աշխարհայացքի հոգեկան ու հոգեվիճակային ընդհանրությունները և երկրորդ՝ Աստվածաշնչային թեմաների միջոցով անդրադարձ հայ իրականությանը:

Աստվածաշնչային թեմաներով Իսահակյանի ստեղծագործությունները ըստ այսմ ժամանակային առումով բաժանվում են երկու խմբի՝ առաջին՝ մինչև 1915 թ. գրված գործերը, որոնցում զուգահեռ է անցկացվում հրեա ժողովրդի գերեվարության շրջանի և հայության ժամանակի վիճակի միջև և երկրորդ՝ 1915 թ. հետո աստվածաշնչային թեմաներով գրված ստեղծագործություններ, որոնցում Սուրբ Գրքի տարբեր հատվածների դիտանկյունից քննվում են հայության ձակատագրին առնչվող, ինչպես նաև համամարդկային ընդգրկում ունեցող հարցերը:

Այս ստեղծագործությունները բաժանվում են երեք խմբի: Առաջին՝ Հին և Նոր Կտակարանների թեմաներով երկու գրական մշակումներ, որոնք վերաբերում են Մովսես մարգարեին և Քրիստոսի ծննդյանը:

Երկրորդ՝ Դավթի ՃԼԶ (136-րդ) սաղմոսի հետևողությամբ գրված բանաստեղծությունը ազգային ձակատագրի համատեքստում՝ զուգահեռի մեջ դիտված սաղմոսների հայ դասական գրականության մեջ եղած մշակումներին: Այս խմբին են պատկանում նաև Սաղմոսաց և Առակաց գրքերից Իսահակյանի կատարած երկու ազատ թարգմանությունները, որոնք բնագրից այնքան են հեռացած, որ կարելի է նաև բանաստեղծական մշակում համարել: Եվ վերջապես երրորդ՝ Արարչագործությանը նվիրված երեք բանաստեղծություններ, որոնք զուգակցում են համամարդկային հարցերի և ազգային ձակատագրի թեմայի:

Այստեղ կքննենք առաջին խմբին վերաբերող և Հիսուսի ծննդյանը

ու Մովսես Մարգարեի կյանքին նվիրված ստեղծագործությունները, որոնք արտահայտում են բանաստեղծի աշխարհայացքը և հոգեվիճակը նրա ստեղծագործական մուտքի և ապա հասուն տարիների՝ միաժամանակ պայմանավորված լինելով հայության 1890-ական և 1930-ական թվականների իրավիճակով:

«Բեթղեհեմի այրի սուրբ Մանկիկը» բանաստեղծության վերնագիրը թելադրել է այս գործի ընթացքը և պատկերային կառուցվածքը: Ի տարբերություն աստվածաշնչային թեմայով Իսահակյանի մյուս չափածո ստեղծագործությունների, որոնք Սուրբ Գրքի տարբեր տողերի մեկնաբանություններն էին բանաստեղծական համապատասխան մշակմամբ, հիշյալ բանաստեղծության համար աղբյուր են ծառայել ո՛չ միայն Մատթեոսի և Ղուկասի ավերտարանների Քրիստոսի ծննդյանը վերաբերող հատվածները, այլև Ս. Ծննդյան շարականները և միջնադարյան պատկերները: Իսահակյանի ստեղծագործությունը հիշյալ երեք բանաստեղծական համադրումն է և նորովի վերամեկնաբանումը իր ապրած ժամանակի ազգային քաղաքական ըմբռնումների և հարցադրումների շրջանակում: Գրված լինելով 1893թ., այն կարևորվում է նաև որպես Վարպետի վաղ շրջանի ստեղծագործություններից մեկը, որը ցույց է տալիս նրա ըմբռնումները գրական ասպարեզ մուտք գործելու շրջանում:

Բանաստեղծությունը եռամաս կազմություն ունի: Առաջին մասում նկարագրվում է Բեթղեհեմյան այրը, երկրորդում՝ այնտեղ գտնվող Մանկիկը և վերջապես երրորդում՝ Մանկանը երկրպագությունը, որը հանգում է մի նոր կյանքով սկսվող ազատության գաղափարին:

Առաջին մասը կամ տունը հինգ տող ունի, որում ներկայացվում է Բեթղեհեմյան քարայրը.

***Լեռների լանջում, քարայրի խորքում  
Շողում է կրակ.- երկնային կյանքի,  
Մի նորոգ կյանքի շողում է կրակ,  
Այնտեղ հավիտյան լույսը չի հանգչում.  
Հույսը չի խաբվում՝***

Քարայրի ներսում վառվող կրակի մասին Ավետարանում որևէ հիշատակություն չկա, թեև ենթադրելի է, որ իբրև մարդկային կացարան ծառայող այրում պետք է կրակ վառվեր: Իսահակյանը, սակայն, այստեղ նման պարզ և կենցաղային մոտիվը չի նկատի ունեցել, այլ Բեթղեհեմյան աստղի լույսը, որն առաջնորդելով մոգերին գալիս հանգ-

1 Իսահակյան Ա., Երկերի լիակատար ժողովածու, հտ. 3-րդ, Երևան, 2014, էջ 7:

չում է այրի վրա կամ ինչպես միջնադարյան մանրանկարներում է պատկերվում՝ այրից ներս՝ Մանկան վերևում, լուսավորելով ողջ այրը: Արևելքից եկող մոգերին առաջնորդող աստղի համար Մատթեոսի ավետարանում ասվում է, որ աստղն «եկեալ եկաց ի վերայ, ուր էր մանուկն» (Բ 9-10):

Մարդկության Փրկչի ծնունդն ավետող աստղի լույսն Իսահակյանի մեկնաբանությամբ նորոգ կյանքի չհանգչող լույսն է: Հույս, հավատ և սեր քրիստոնեական ըմբռնումն այստեղ ներկայացված է հույս և լույս զուգորդմամբ:

Երկրորդ տունը, որն ամենածավալունն է, կազմված է ութ տողերից և իր հերթին ունի երկմաս կառուցվածք: Առաջին չորս տողերում ներկայացվում է այրի մտւորում դրված Մանուկը: Բեթղեհեմյան այրում Քրիստոսի ծնվելու մասին Մատթեոսի և Ղուկասի ավետարանների բոլոր նկարագրությունները Իսահակյանը խտացրել է չորս տողերում.

***Ներս մտիր այրը,- հովիվ ու գառներ,  
Գառների մսուր,- անշուք խանձարուր,  
Ահա Մանկիկը անմեղ ու անբիծ  
ժպտում է պայծառ-սեր է մեզ շնչում:***

Բեթղեհեմի այրի շրջակայքում գտնվող հովիվների մասին Ղուկասի Ավետարանում ասվում է. «Եւ հովիւք ի տեղուջն յայնմիկ բացթեայք՝ որք պահէին զպահպանութիւնս գիշերոյ հօտի իւրոց» (Ղուկ. Բ 7-8):

Մանկան խանձարուրով պատվելու և մսուրը դրվելու մասին երկիցս հիշվում է Ղուկասի Ավետարանում: Նախ ասվում է, որ Մանկան ծնվելուց հետո Մարիամը «պատեաց զնա ի խանձարուրս և եղ զնա ի մսուր» (Բ 6-7): Այնուհետև Տիրոջ հրեշտակն է հովիվներին ասում. «Գտանիցէք մանուկ պատեալ ի խանձարուրս և եղեալ ի մսուր» (Բ 12):

Իսահակյանը բանաստեղծական հանրագումարի բերելով ավետարանական տողերը հետևել է այն ըմբռնմանը, որ մարդկության Փրկիչը ջբեղ պալատներում չծնվեց, այլ պարզ քարայրի հասարակ մսուրում: Նման մեկնաբանությամբ է պայմանավորված նաև խանձարուրին տրված «անշուք» բնորոշումը: Այսինքն մսուր չդրվեց թանկարժեք կերպասների մեջ փաթաթված, այլ հասարակ խանձարուրով պատվելով: Սա նոր ժամանակների սոցիալական մտածողության բանաստեղծական արտահայտությունն է՝ համահունչ ժամանակի հավասարության ըմբռնումներին: Հինգերորդ դարում գրված շարականում ասվում է.

**Անբաւելին երկնի և երկրի  
Ի խանձարուրս պատեցաւ<sup>2</sup>:**

Միջնադարյան խորհրդարանական ըմբռնմամբ խանձարուրի միջոցով այն հակադրությունն է շեշտվում, որ Աստծո Որդին, Ում երկինքն ու երկիրը չէին կարողանում իրենցում պարփակել, ի խնդիր մարդկության փրկության, ամփոփվեց ու պատվեց նորածնի խանձարուրում:

Իսահակյանի գրածին համահունչ են, սակայն, Ս. Ծննդյան շարականի հետևյալ տողերը.

**Խորհուրդ մեծ եւ սքանչելի,  
Որ յայսմ աւուր յայտնեցաւ,  
Հովիւքն երգեն ընդ հրեշտակս՝  
Տան աւետիս աշխարհի<sup>3</sup>:**

Ս. Ծննդյան այրում դրված Մանկանը վերաբերող Վարպետի տողերը համահունչ են թե՛ շարականին և թե՛ ասես վերցված լինեն Մանուկ Հիսուսին պատկերող միջնադարյան մանրանկարներից և Վերածնության շրջանի վարպետների կտավներից:

Ավետարանում գրված է Ս. Ծննդյանը հաջորդող հրեշտակային օրհներգության ու փառաբանության մասին, սակայն մանկան լացելու հետ կապված որևէ հիշատակություն չկա: Նորածինը քանի որ իր մուտքն աշխարհ ազդարարում է լացով, ուստի այս տան երկրորդ մասի չորս տողերը Իսահակյանը նվիրել է Մանկան լացին, սակայն ոչ սովորական նորածնի լացին: Մանկան լացն իսկ այստեղ կապվում է Աստծո Որդու սկսվող փրկչական առաքելության հետ.

**Ահա լալիս է , այդ նրա սիրտն է,  
Որ կյանքի շեմքից, ծաղիկ օրերից  
Մարդկանց վշտերի համար տանջվում,  
Մարդկանց մեղքերին ներումն աղերսում:**

Ծննդյան առաջին իսկ պահից Մանուկ Հիսուսի սիրտը ցավում է մարդկության համար:

Ավետարանում հովիվների այցելությունից հետո հիշվում է մոզերի երկրպագությունը: Մատթեոսի Ավետարանում ասվում է, որ մոզերը հասնելով քարայրին «անկեալ երկրպագանէին Նմա և բացեալ զգանձս իրեանց մատուցէին Նմա պատարագս» (Մտթ. Բ 10-11): Նույնը վերաբերում է նաև այս տողերի հիման վրա ստեղծված միջնադարյան ստեղծագործություններին և պատկերներին:

2 Չայնքաղ Ծարական, Վաղարշապատ, 1888, էջ 22:  
3 Նույն տեղում:

Քարայր մտնող և մուտքին խոնարհված մոզերի երկրպագությանը ավարտվում է նաև Ս. Ծննդյան տեսարանը միջնադարյան պատկերներում: Մոզերի երկրպագությունը խորհրդանշում է նորածին Փրկչին: Այն նոր շրջանի մտածողությանը համահունչ ձևով է ներկայացրել Իսահակյանը չափածոյի վերջին տանը.

**Անկեղծ զղջումով, մաքուր արցունքով  
Խոնրահվի՛ր ընկեր, համբուրի՛ր Նրան,  
Նա քեզ կներե, Նա քեզ հույս կտա.  
Եվ դու զորացած կրի՛ր քո խաչը,-  
Է՛լ շղթա չկա,  
Է՛լ արյուն չկա:**

«Ընկեր» հավաքական բնորոշմամբ իր ժամանակի մարդուն է դիմում, որ նա խոնարհվի նորածին Փրկչի առջև, զորացած կրելու իրեն վիճակված խաչը, որը կյանքի փորձություններում աներեր առաջ գնալն է:

Ավետարանական պատմությունը ու վերջինիս հոգևոր խորհուրդը նոր ժամանակներին համահունչ ձևով մեկնաբանվում ու եզրափակվում են շղթաներին ու արյանը վերաբերող վերջին երկու կիսատողերում, որոնցով մարդկության Փրկչի առջև խոնրահումը հանգեցնում է շղթաներից և բռնության թափած արյունից զերծ ազատության առջև խոնարհվելուն:

Ավելի քան չորս տասնամյակ անց ազատության այս ընթրնումը իր ստեղծագործական աշխարհայացքի զարգացմանը և ազգային ակնկալիքների խորտակմանը համահունչ՝ դառնությամբ և խստությամբ է Իսահակյանը ներկայացրել 1936թ. Փարիզում գրված «Յահվեի վրեժը» լեգենդում:

Բեթղեհեմյան պարզ ու ջինջ այրի փոխարեն, որն հիշեցնում է Արագածի լանջերը, հայության մեծ ողբերգությունից հետո և 1937թ. շեմին փարիզյան ժխորում Իսահակյանը մարդկության ներող Փրկչի փոխարեն դիմում է հրեաների վրեժխնդիր Յահվե Աստծուն, ազատության տանող գաղափարը ներկայացնելով որոշակիորեն այլ հարցադրմամբ:

«Յահվեի վրեժը» Իսահակյանն անվանել է «Հրեական ավանդապետ»: Այն ավելի շատ աստվածաշնչային թեմայի և վերջինիս հրեական ավանդազրույցների հիման վրա ստեղծված գործ է, դարձյալ ուրույն մեկնաբանությամբ: Վերջինս բանաստեղծական մի անդրադարձ է այն հարցին, թե ինչու Մովսեսին բախտ չվիճակվեց հասնելու Ավետյաց երկիր, այլ մահկանացուն կնքեց վերջինիս ուղղակի շեմին:

Այս «ինչո՞ւ»-ի պատասխանը Իսահակյանը ներկայացրել է Մովսեսի ողջ կյանքի բանաստեղծական խտացման մեջ: Մովսեսի՝ հրեա ժողովրդին եգիպտական գերությունից անապատում 40 տարի դեգերելուց հետո մինչև Ավետյաց երկիր առաջնորդելու պատմության մասին գրված է «Ելից գրքի» սկզբից մինչև «Երկրորդումն օրինաց» գրքի վերջին ԼԴ գլխում, որում ասվում է, որ հրեա ժողովուրդը Մովսեսի գլխավորությամբ հասնում է Ավետյաց երկրի սահմաններին, որից հետո խոստացված երկիր մուտք գործելը կատարվում է Հետո Լավեի գլխավորությամբ:

Ինչպես կտեսնենք, 1930-ական թվականներին Փարիզում Իսահակյանը հետևողականորեն անդրադարձել է Հին Կտակարանի թեմաներին, որի նպատակն էր զուգահեռներ գտնել հայ կյանքի տարբեր իրողությունների հետ:

Բանաստեղծության 40 տողերի մեջ խտացվել է Մովսեսի ողջ կյանքը, այդ թվում պատասխանը այն հարցի, թե ինչու նա ուղք չդրեց Ավետյաց երկիրը: Ինչպես գրում է Ա. Ղանալանյանը. «Մի կողմ թողնելով ավանդական բանահյուսության մեջ եղած մանրամասները, նա օգտագործել է միայն Մովսեսի կյանքի ու վարքագծի էական դրվագները, հաջորդական ու տրամաբանական կապ ստեղծել վերջիններիս միջև»<sup>4</sup>:

«Ելից գրքի» առաջին գլխում պատմվում է հրեա ժողովրդի եգիպտական գերության մեջ կրած նեղությունների մասին: Երկրորդ գլխի 1-10-րդ տողերում պատմվում է Մովսեսի ծննդյան մասին: Ասվում է, որ Եգիպտոսի գիտունները գուշակում են, որ մեկ տարվա ընթացքում ծնված հրեա մանուկներից մեկը հետագայում իր ժողովրդին ազատելու է եգիպտական գերությունից: Փարավոնն իմանալով այս մասին, պատվիրում է, որ եբրայեցիների մինչև մեկ տարեկան երեխաներին կամ գետում խեղդեն կամ սպանեն: Երբ Մովսեսը երեք ամսեկան է դառնում, այնքան ժիր և կայտառ է լինում, որ ծնողները նրան այլևս չեն կարողանում թաքցնել: Ապավինելով բախտին, նրան մի կողմի մեջ են դնում և գցում գետը: Կողովն ափ է դուրս գալիս այնտեղ, ուր գտնվում էր փարավոնի դուստրը, ով լինելով անզավակ, որդեգրում է մանկանը: Ինչպես «Ելից գրքում» է ասվում. «Եւ եղև յորդեգիրս» (Բ 9): Նկատի ունենալով այս խոսքերը, Իսահակյանը բանաստեղծության սկզբում գրում է.

### **Միակ ժառանգն էր Մովսեսը ներհուն**

4 Ղանալանյան Ա., Հայ գրականությունը և բանահյուսությունը, Երևան, 1986, էջ 228:

### **Փարավոնների հզոր բազուկի, Սակայն գիտեր, որ արյունն է կրում Մեծ Իսրայելի ընտրագույն ազգի<sup>5</sup>:**

Ելից գրքի «Եվ տառապէին որդիքն Իսրայելի» (Բ 23) և «Եւ յաղթա-հարէին եգիպտացիքն զորդիսն Իսրայելի բռնութեամբ. Եւ կեղէին զկեանս նոցա ի գործ խիստ կաւոյ և աղիսարկի՝ և յամենայն գործ դաշտաց» (Բնություն գործադրելով նեղում էին նրանց, տաժանակիր աշխատանքի էին լծում, նրանց կյանքը մաշում կավի, աղյուսաջինության ու դաշտային բոլոր գործերի մեջ) (Ա 13-14) տողերի հիման վրա Իսահակյանը գրում է.

### **Իր եղբայրներին տեսնում էր գերի, Գիշեր ու ցերեկ խոշտանգված մշակ, Կարկառների մեջ դժխեմ բուրգերի Քաղցած ու ծարավ, մտրակների տակ:**

Մովսեսի չափահաս դառնալուց հետո իր ազգակիցների կրած չարչարանքները տեսնելու մասին ասվում է. «Եւ եղեւ յետ աւուրց բազմաց, իբրեւ եղեւ մեծ Մովսէս, Ել առ եղբարս իւր որդիսն Իսրայելի, հայեցեալ ի չարչարանս նոցա» (Բ 11): Իսահակյանը Մովսեսի ունեցած հոգեկան ապրումների մասին գրում է.

### **Եվ մորմորում էր սիրտը Մովսեսի, Վրեժ էր ուխտում մեծ Տան դեմ դաժան:**

«Մեծ տուն» ասելով Իսահակյանը, ինչպես բանաստեղծության տողատակի ծանոթագրության մեջ է նշում, նկատի ունի փարավոնների տոհմը՝ թագավորական դինաստիան:

Իսահակյանն այնուհետև բերում է հետևյալ պատմությունը: Մի օր, երբ Մովսեսը շրջում էր միայնակ, մի մարդ նրան հարցնում է, թե ո՞վ է ինքը: Պատանի Մովսեսը պատասխանում է, որ ինքը եգիպտացի է: Հրեա ժողովրդի ապագա առաջնորդն այնուհետև այս դեպքը մոռանում է.

### **Չունվելով ամբողջ իր ազգի վշտին:**

Աստվածաշնչում նման պատմություն չկա: Փոխարենը հետևյալն է պատմվում: Մի օր Մովսեսը տեսնում է, որ մի եգիպտացի ծեծում է մի հրեայի: Նա եգիպտացուն սպանում է և թաղում ավազների մեջ: Հաջորդ օրը Մովսեսը տեսնում է, որ երկու հրեա կռվում են իրար հետ: Նրանցից մեկին ասում է, թե ինչու է հարվածում իր ազգակցին: Վերջինս պատասխանում է, թե նրան ով է կարգել իրենց վրա դատավոր

5 Իսահակյան Ա., Երկերի լիակատար ժողովածու, հտ. 3-րդ, էջ 71:

և ասում է, թե ի՞նչ է իրեն ևս ցանկանում է սպանել, ինչպես նախորդ օրն այն եզրիպատացուն: Մովսեսն այս խոսքերից վախենում է՝ մտածելով, որ ուրիշները նույնպես կիմանան եզրիպատացուն սպանելու մասին: Պարզվում է, որ փարավոնը ևս գիտե, և ցանկանում է նրան սպանել, որից հետո Մովսեսը փախչում է եզրիպտոսից:

Մովսեսի կյանքը ծնվելուց մինչև մահանալը հանգամանորեն ներկայացնող և միջնադարյան ձեռագրերով վկայված «Պատմություն Մովսեսի» պարականոն պատմության մեջ ևս եզրիպատացու առջև Մովսեսի ուրանալու մասին ոչինչ չի ասվում:

Ըստ այս պարականոնի Մովսեսը եզրիպտոսից փախչում է, որովհետև մեծ հռչակի էր հասել և եզրիպտացիները նրան նախանձում են և ցանկանում սպանել: Իմանալով այս մասին, նա սպանում է մի եզրիպտացու և փախչում<sup>6</sup>:

Եզրիպտացուն սպանելու և փախչելու մասին պատմությունն է, որ եբրայական պարականոն ավանդազրույցներից մեկում դարձել է Մովսեսի ուրացումը եզրիպտացու առջև, որն էլ գրական մշակման է ենթարկել Իսահակյանը՝ իրեն հայտնի աղբյուրից: «Յահվեի վրեժը» չափածոն երկմաս կառուցվածք ունի: Առաջին մասն ավարտվում է Մովսեսի ուրացման պատմությամբ: Երկրորդ մասը վերաբերում է Ավետյաց երկրի շեմին նրա վախճանվելու և Եհովա Աստծո կողմից սահմանված պատժի, կամ ինչպես վերնագրում է ասվում, վրեժի մեկնաբանման հետ:

Աստվածաշնչում ասվում է, որ Մովսեսը վախճանվում է 120 տարեկանում: Նրա պատանեկությունից մինչև այս տարիքին հասնելը ապրած կյանքն Իսահակյանը խտացնում է բանաստեղծական երկու տներում, որոնցից առաջինը վերաբերվում է հրեա ժողովրդին անապատը հասցնելուն, որից հետո գալու էր Ավետյաց երկիրը.

**Երբ փարավոնի երկրից անօրեն  
Մինչ ափը կապույտ՝ Ավետյաց երկրի,  
Տոհմերի հովիվ Մովսես մարգարեն  
Ազատեց, բերեց զարմն Իսրայելի:**

Երկրորդ տան մեջ ընդհանրացված ձևով ներկայացվում են անապատում անցկացված 40 տարիները: Ակնարկվում են ոսկե հորթին պաշտելը, տարբեր տրտունջները, աստվածային պատվիրանների ստացումը և Ավետյաց երկրի սահմանագծին հասնելը.

6 Թանգարան հին և նոր նախնեաց. Ա, Անկանոն գիրք Հին Կտակարանաց, Ս. Ղազար, 1896, էջ 201:

**Երբ քառասուն ամ հետս ամբոխի հետ  
Տոկաց, դեզերեց Մին անապատում,  
Կրրեց բազմազան անցքեր չարաղետ,  
Մարտնչեց անդուլ, տքնեց անապատում:**

Ինչպես գրված է «Օրինաց գրքի» վերջին՝ ԼԴ (34-րդ) գլխում, Աստված Մովսեսին ցույց է տալիս խոստացված երկիրը՝ ասելով, որ այնտեղ կմտնի ոչ թե նա, այլ իր զավակը. «Ցուցի աչաց քոց ես անդր մի՛ մտանիցես» (գլ. ԼԴ 5):

Հին Կտակարանում Մովսեսին ուղղված այս արգելքը որևէ պատժի վրա հիմնված չէ: Մովսեսից երեք տարի առաջ վախճանվում է նրա ավագ եղբայրը՝ Ահարոնը՝ իր գլխավոր գործակիցը:

Երկիրը տեսնելը, բայց այնտեղ չհասնելը խորն իմաստ ուներ: Այն խորհրդանշում է, որ գերության մեջ ծնված սերունդը չպետք է հասներ խոստացված երկիրը: Մովսեսին վերաբերվող արգելքը «Պատմություն Մովսեսի» արդեն հիշատակված պարականոնում մեկնաբանվում է որպես նրան տրված պատիժ, սակայն միանգամայն այլ պատճառով. «Ելից գրքում» պատմվում է, որ Մովսեսը զավագանը խփում էր անապատի ավազին և ապառաժ ժայռին ու հորդառատ աղբյուր էր բխում: Ըստ պարականոն պատմության մի անգամ, երբ նա զայրացած է լինում ժողովրդի վրա «եհար զվեմն բարկութեամբ, զի պարտ էր խոնարհութեամբ և աղօթիք հարկանել զվեմն, որպէս և յայլ աուրսն սովոր էր առնել՝ և ոչ բարկութեամբ»<sup>7</sup>: Քանի որ հեզությամբ չէր խփել զավագանը, այլ բարկությամբ, ուստի Աստված չթողեց, որ նա տեսնի երկիրն Ավետյաց:

Այսպիսին է հայկական միջավայրում տարածված եբրայական պարականոնի մեկնաբանությունը: Իսահակյանը, սակայն, հետևել է իրեն հայտնի այն տարբերակին, ուր արգելքը մեկնաբանվում է որպես պատիժ կատարած ուրացմանը.

**Եվ արդարադատ Յահվեն խստաբար  
Պատժեց Մովսեսին, իբրև դրուժանի,  
Օտար վայրում նա մեռավ տենչավառ,  
Հայրերի հողին չեղավ արժանի<sup>8</sup>:**

Իսահակյանական մեկնաբանության համար Հ. Ղանալանյանը գրում է. «Մեծ է այս լեզբնդի գաղափարական նշանակությունը, որով-

7 Նույն տեղում, էջ 205:

8 Իսահակյան Ա., երկերի լիակատար ժողովածու, հտ. 3-րդ, էջ 72:

հետև պոետը մարդկանց ուսուցանում է երբեք չխաղալ ազգային արժանապատվության հետ, չուրանալ հայրենիքը»<sup>9</sup>:

Առավել խորն ընդհանրացմամբ Ա. Ղանալանյանն է գրում. «Մեր օրերում մշակելով հրեական հին ավանդավեպը, Իսահակյանի նպատակն է եղել ընդգծել այն ծշմարտությունը, ըստ որի հայրենասեր հերոսը պետք է մինչև վերջ հետևողական ու անբասիր լինի իր վարքագծի մեջ և իր մեծ գործի ճանապարհին թույլ չտա ոչ մի հանցանք կամ զանցանք»<sup>10</sup>:

Մովսես մարգարեի հետ կապված այս պատմության Իսահակյանի կատարած գրական մշակումը ցույց է տալիս, որ նման սյուժեներով Վարպետի գրած ստեղծագործությունների վերլուծությունը պետք է ընթանա երկու ուղղությամբ: Մի կողմից պետք է հիմնվի որպես գրական սկզբնաղբյուր ծառայած բնագրի վրա և մյուս կողմից քննվի, թե դրանք թեմատիկ ինչ վերամեկնաբանման ու ասեկիքի արտահայտման փոփոխություններ են կրել Իսահակյանի գեղարվեստական մտածողության ստեղծագործական քուրայում:

## АРТУШ МКРТУМЯН СТИХИ, НАПИСАННЫЕ ПО МОТИВАМ ДВУХ БИБЛЕЙСКИХ ТЕМ

Ключевые слова: Вифлеемская пещера, три волхва, Евангелие, пастух, ягнята, вера, надежда, любовь, фараон, египтянин, Земля Обетованная, сорок лет.

В статье анализируются два стихотворения Ав. Исаакяна - о рождении Христа и жизни Моисея, написанные в 1893г. и в 1930-х годах в Париже. Обсуждаемые произведения представляют различные душевные состояния поэта, обусловленные трагическими событиями тех десятилетий и периодом творческого пути писателя.

Оба произведения, независимо от затрагиваемых тем, являются воспроизведениями соответствующих строк Евангелия и связанных с ними приданий.

## Artush Mkrtumyan ON THE POEMS WRITTEN IN ACCORDANCE WITH THE TWO BIBLE THEMES

**Key words:** Bethlehem, grotto, three magicians, Gospel, shepherd, sheep, hope, love, belief/faith, pharaoh, Egyptian, Promised Land, forty years.

The present article is dedicated to the two poems related to the birth of Christ written in 1893 and to the life of Moses written in the 1930s in Paris.

Conditioned with the themes of poetry, Isahakyan's literary life and the tragic events of those years, the two poems evidently represent Isahakyan's two different thematic attitudes and mental state.

The two poems, despite the problems that touch upon, are the literary reproduction of the Bible, the embodiment of relevant lines and the different traditions related to it.

9 Ղանալանյան Հ., Ավետիք Իսահակյան, Երևան, 1955, էջ 135:

10 Ղանալանյան Ա., Հայ գրականությունը և բանահյուսությունը, էջ 228: